

ՆԱՄԱԿՆԵՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Բ.

Բարոյագիտութեան մասին:

Սիրելի Սուրէն.

Իմ առաջին նամակից յետոյ դու խնդրում ես շարունակել. իմ միտքն էլ այդ է, ես կամենում եմ մի շարք նամակների միջոցաւ պարզել այն բոլոր կէտերը, որոնք առնչութիւն ունեն բարոյական դաստիարակութեան հետ կամ նրա էութիւնն են կազմում:

Այսօր գրում եմ քեզ բարոյագիտութեան մասին:

Ես իմ անցեալ նամակում խօսելով բարոյական դաստիարակութեան մասին, ի միջի այլոց ասացի, որ շափազանց դժուար է վճռականօրէն ասել թէ այս ինչ միջոցը, այն ինչ մեթոդը անշուշտ տանում է մարդուն դէպի բարոյականութիւն և այդ դժուարութիւնը նրանումն է կայանում, որ բարոյագիտական ուսմունքը հիմնուած է այնպիսի գիտութիւնների վրա, որոնք վախճանական ակսեօմաներ չունեն, այլ ենթակոյ են փոփոխութեան, համեմատ ժամանակի աշխարհահայեցողութեան. նոյնը պիտի կրկնեմ և այժմ. բարոյագիտութիւնը նախապատմական ժամանակներից մինչև մեր օրերը իր արտայայտութիւնների մէջ շատ մեծ փոփոխութիւններ է կրել և չգիտենք էլի որքան փոփոխութիւններ պիտի կրի ապագայում. կայ մի ընդհանուր չափ, որ անփոփոխ է, այն է՝ բարոյագիտութեան մէջ լաւի և վատի կամ բարւոյ և չարի գաղափարները միշտ մնացել են նոյնը, բոլոր ժամանակներում, բոլոր ազգերը ինչ դարգացման, դիրքի մէջ էլ որ եղել են և են, ինչ կրօն էլ որ դաւանել են, միշտ բարին, լաւը ընդունել են իբրև առաքինութիւն, իսկ չարը կամ վատը՝ ոչ առաքինութիւն. ոակայն այդ հասկացողութիւնների կիրառումն կեանքի վէջ տարբեր ձևով են արտայայտուել:

Այս տեղից հարց է ծագում. եթէ մէկ գործողութիւն մէկի համար լաւ է, միւսի համար վատ, ապա ինչպէս պիտի կարողանանք պարզել թէ որի ընդունածն է ճշմարիտ:

Այս հարցի պատասխանը ես կտամ հետզհետէ և որպէսզի իմ ասելիքը, փոքր ինչ ռիստեմատիկաբար լինի, պիտի պարզեմ առհասարակ բարոյագիտութեան թէորիան:

Բարոյագիտական որոշումները անփոփոխ են իրանց մէջ մարդկային գործողութիւնների գնահատութիւնը, ասում է Հեոֆգինզը: Եթէ մենք այս ինչ կամ այն ինչ գործողութիւնը անուանում ենք բարի կամ չար, դրանով մենք ոչ թէ արտայայտում ենք նրա առաջ գալու պատճառը, այլ տալիս ենք այն գնահատութիւնը, որ նա ունի մեր աչքում: Ամեն մի այդպիսի գնահատութիւն պահանջում է, որ նախապէս գոյութիւն ունենային մասամբ պահանջ կամ զգացմունք, որ գրգի մեզ նման դատողութիւն տալու, մասամբ էլ այդպիսի գնահատութեան համար պիտի յայտնի չափ, իդէալ գոյութիւն ունենայ, որի հետ մենք համեմատենք այդ գործողութիւնը: Այս չափը կամ մասշտաբը անհրաժեշտ է, որպէս զի կարողանանք որոշել, թէ կենսական ռիսկողութիւնը կամ ձեւը մենք պիտի համարենք լաւ բարոյական տեսակէտից:

Այն գնահատութիւնը, որ մենք անում ենք զգացմունքի և պահանջի հիման վրա, լինում է կրաւորական, իսկ այն գնահատութիւնը, որ կատարում ենք համեմատական մասշտաբով՝ ներգործական:

Բարոյ և չարի բարոյագիտական որոշումն գոյութիւն ունի անկախ մտածողութիւնից և գիտական հետախուզութիւնից, նա առաջանում է կենդանի զգացմունքից և ձգտումներից, որ մեզ հանգիստ չի տալիս, մինչև որ արտայայտում ենք կամ ուրիշ խօսքով գնահատութեան ենք ենթարկում կատարուած դէպքը: Մեր առողջ և հաստատուն կեանքի պայմանը հէնց նրանումն է կայանում, որ մեր որոշումները և սկզբունքները առաջնան ոչ թէ

խորը մտածմունքներից կամ ինչ որ հեռաւորութիւնից
գան, այլ լինեն մեր միտն ու արիւնը: Որովհետեւ բարո-
յական դատողութեամբ մենք արտայայտում ենք մեր
անձնաւորութիւնը, ուրեմն և նա պիտի կապակցուած լինի
մեր ամբողջ բնութեան հետ և ոչ միայն դատողութեան,
մանաւանդ, որ կեանքը միշտ միջոց չի տալիս մտածելու,
այլ պահանջում է կատարուած դէպքի մասին արտայայ-
տել վայրկեանապէս մեր գնահատութիւնը:

Մինչև անգամ այն ժամանակ, երբ մենք և՛ ժամա-
նակ ենք ունենում և՛ ընդունակ լինում մտառութեան,
հէնց այդ ժամանակ էլ մեր զգացմունքներն ու ձգտում-
ները այնքան զօրեղ են լինում, որ մենք անգիտակցա-
բար տալիս ենք մեր որոշումը: Այն նախապաշարումը,
թէ մեր իմացականութիւնը պէտք է մեր ներքին կեանքի
գերագոյն հեղինակութիւնը լինի, վաղուց խորտակուել է
հոգեբանների ձեռքով և յաճախ այն, ինչ որ մենք հա-
մարում ենք իմացականութեան արտայայտութիւն, իրա-
պէս է մեր սրտի պահանջի արտայայտութիւն: Տրամա-
բանութեան և թուաբանութեան մէջ թերեւս իմացակա-
նութիւնը գերակշռող տեղ է բռնում, բայց նրա ձայնը
այնքան էլ զօրեղ չէ մարդկային արարքների գնահատու-
թեան վերաբերութեամբ:

Դու չկարծես թէ ես զգացմունքին այսքան մեծ տեղ
տալով ժխտում եմ իմացականութեան դերը բարոյագի-
տութեան մէջ, ոչ, այլ այս ասելով ես կամենում էի
միայն ընդգծել կրաւորական գնահատութիւնը, որ յա-
տուկ է ամեն մի մարդու, իսկ այս կրաւորական գնա-
հատութիւնը, զգացմունքը և ձգտումը, որ դոյութիւն
ունի իւրաքանչիւր անհատի մէջ, նա ստանում է բնու-
թիւնից, կեանքի պայմաններից և ամբողջ ժողովրդի ա-
ւանդութիւններից: Առանձին անհատը մի քանի կարեւոր
ունակութիւններ ստանում է ժառանգաբար, ապա իւ-
րաքանչիւր անհատ իրիւ անգամ ընտանիքի, ցեղի, պե-
տութեան, իր զարգացմամբ և կրթութեամբ մտնում է
որոշ հոգեկան մթնոլորտի մէջ, որովհետեւ նա հանդի-

պում է սովորութիւնների, մտապատկերների, դրդումների, և հարցերի, որոնց նա իւրացնում է ակամայից առանց կարողանալու դրանք դատողութեան առարկայ դարձնելու ընտրութիւն անել։ Որովհետեւ նա ծագում է ցեղի միջից, ուստի և մօր կաթի հետ ծծում է նրա աւանդութիւնները։ Արուեստը, մտածելակերպը, գործողութիւնները, այս բոլորը անգիտակցական ժառանգութիւններ են նախորդներից ստացած։ Բարոյական որոշումների ժամանակ, զօրեղ զգացմունքների արտայայտութեան դէպքում, որոնցով գնահատում ենք մարդկային արարքները, մենք գործ ենք աւնենում ոչ թէ առանձին անհատի մտքի արտայայտութեան հետ, այլ ցեղական փորձի հետեւանքների հետ։ Անհատը իր համար բարոյագիտութիւն չի հնարում, նա չի ստեղծում, այլ սա գալիս է անցեալից, ուստի և զօրեղ է։ Այն բարոյագիտութիւնը, որ ցեղի մէջ է ապրում, դառնում է մարդկային գոյութեան առողջութեան և ուժի պայման. և նա, ով կամենում է իր դատողութեամբ և քննադատութեամբ քակել այն, ինչ որ կառուած է ընտրութեան (հետ, նա պէտք է ոչ միայն ահագին արգելքներ վերացնի, այլ և պիտի լաւ գիտենայ թէ ինչ է անում, որպէս զի չընկնի անուղղելի մոլորութեան և մէջ ուրիշներին էլ չմոլորեցնի իր հետ,

Յեղական և կեանքի այս գործող բարոյագիտութիւնը կոչւում է դրական բարոյականութիւն։ Նա արտայայտւում է հասարակական դատողութիւնների և կարգերի մէջ, որոնք յաճախ կրում են առածների ձև և կարող են լինել կամ տեական կեանքի իմաստութիւններ որ և է ազգի, ցեղի, կրօնական համայնքի, կամ աւելի կարճատեւ գոյութիւն ունեցողներ իբրեւ որ և է դարի, կամ դարաշրջանի «հասարակական կարծիքները»։ Դրական բարոյականութիւնը յաճախ երևան է գալիս անհատական դէմքերի մէջ (կրօնների հիմնադիրների, հերոսների, օրէնսդիրների ևն.), դէպի որոնց դարձած է լինում մի կամ մի շարք սերունդների հայեացքները, իբրեւ գերագոյն մարմնացում մարդկութեան դադափարների։

Դրական բարոյականութիւնը կարելի է համեմատել գետի հունի հետ, որով հոսում է մարդկային կեանքի հոսանքը և որը շարունակ խորանում է այդ հոսանքով, մի և նոյն ժամանակ հոսանքը այդ հունով առաջ է գնում մինչև այն ժամանակ, մինչ նրան չեն կանգնեցրել նոր պատնէշներ կամ նրա հոսանքը չեն փոխել նոր առուններ:

Անշուշտ դու հասկանում ես, որ այս ջրանցքներն ու պատնէշները իմացականութիւնն ու քննադատութիւններն են բարոյագիտութեան վերաբերմամբ: Այստեղ հարց է ծագում կրկին, արդեօք գիտակցական մտածմունքները ընդհարուելով սերնդէ սերունդ անցնող անգիտակցական կամ աւելի ճիշդ ասել բնագրական բարոյագիտութեանը վնասութիւն չեն լինիլ, չեն թուլացնիլ նրա հոսանքը:

Ո՛չ: Ընդհակառակը, իմացական բարոյագիտութիւնը զարգանալով և ոգւատուելով դրական բարոյագիտութիւնից և դառնալով վերջնիս ձայնը, հակադարձ ներգործութիւն է ունենում դրական բարոյագիտութեան վրա և վճռում է այնպիսի խնդիրներ, որոնք այլ ճանապարհով չէին կարող վճռուել:

Պարզեմ միտքս:

Դրական բարոյագիտութիւնը, որին ես անուանեցի բնագրական, չէր կարող անշարժ մնալ և իբրև մարդկային կեանքի ամուր ու առողջ պայման այն նշանակութիւնը չէր կարող ունենալ, եթէ չլինէր մի մասշտաբ, որով չափէինք նրա որոշումները: Իսկ այս մասշտաբը չէր կարող առաջանալ դրական բարոյագիտութիւնից, որովհետեւ եթէ այդպէս լինէր, մենք կունենայինք աշխարհահայեցողութեան շատ սահմանափակ շրջան: Ուստի և անհրաժեշտ է պարզել մեզ, թէ ի՞նչ սկզբունք է հիմք ծառայում այն գնահատութեան, որ անում է բնագրական բարոյագիտութիւնը և երբ մենք կամենանք այդ հարցին մօտենալ, արդէն կանգնած կլինենք գիտական բարոյագիտութեան ճանապարհի վրա:

Բարոյագիտութեան նկատմամբ երկու զօրեղ հոսանք վայ. մի մասը ընդունում է, որ բարոյագիտութեան մէջ

վտանգաւոր է որ և է դատողութիւն կամ քննադատութիւն և անգիտակցական կամ՝ քնազգական բարոյագիտութիւնը համարում է մարդկային կեանքի բաղդաւորութեան հիմնակէտ, իսկ միւս մասը, ընդհակառակը պնդում է, որ կան բարոյական խնդիրներ, որոնք առանց քննադատութեան կամ վերագնահատութեան կմնային անլուծելի «Ինչո՞ւ» հարցը մարդու պահանջների ամենատեղիւ տեսակներից մինն է. այսպիսի հարցեր ճնշելը հեշտութեամբ կարող են գառնալ առհասարակ հոգեկան կեանքի ճնշումն. հարցերի և կասկածների մէջ էլ կարող է երևան գալ կեանքի ուժն ու առողջութիւնը, ասում է Հեոֆդինգը:

Կեանքի ընթացքը ինքն հէնց հարցեր է առաջացնում. միայն այնտեղ, ուր հորիզոնը նեղ է և խնդիրները սահմանափակ, այդ տեղ միայն մենք ամեն բան հասկանալի ենք գտնում: Բայց կատարւում են նորանոր փորձեր, տեղի են սւնենում նոր դրութիւններ, որոնք աւանդութիւնների բարոյագիտութեամբ չեն կարող բացատրուել, կամ հարկաւոր է լինում բարոյական շատ դնահատութիւններ դասաւորել, որի բացակայութիւնը խանգարում է մեր կանոնաւոր մտածողութեան. այլապէս մենք չէինք կարող զանազանել թէ ո՞ր դատողութիւնները մեծ և ո՞րոնք աննշան են կեանքի համար: Բարոյական դատողութիւնը կամ գնահատութիւնը, ի հարկէ, սկզբում զգացմունքի անգիտակցական արտայայտութիւն է, այս մասին վիճել չի կարելի, բայց կարելի է վիճել այն երևոյթների դէմ, որոնց հետ միացած է զգացմունքը, կարելի է վիճել դէպքի գնահատութեան մասին.

Անշուշտ անհատի կամ ժողովրդի հոգեկան զարգացումը կրում է ծանր լուպէներ, երբ դարձնում է նրա մէջ մտածողութիւնն ու քննադատութիւնը: Բնազդն ու անգիտակցականութիւնը այդ ժամանակ կորցնում են իրանց անմիջական ուժն ու հաւատքը և շատ կասկածելի է, թէ կյաջողի՞ այս կորուստը փոխարինել աւելի լաւով: Բայց այնտեղ, ուր կեանքն ինքն է հարցեր դնում մեր

բերանը, այնտեղ կամ մենք պիտի պատասխանենք, կամ ասելը թէ ինքն ապատասխանել անկարելի է: Մի և նոյն ժամանակ հարկ է նկատել, որ անգիտակցական հաւատքն ու ուժը բացարձակ բարիքների չեն: Լուսնոտը աւելի ուղիղ է գնում, քան դիտակցաբար արթուն մարդը կդնար. բայց և այնպէս մենք հսկում ենք նրա վրա, կամ բռնում, կամ աշխատում ենք, որ նա գետնին մօտենայ: Ուրեմն պէտք է ձգտել, որ գիտակցական գնահատութիւնը ընձեռնի անմիջական բողոքի պահանջներին և հրամաններին լաւագոյն հայեացքներ:

Ուրեմն ամեն մի հոգեկան առողջ զարգացումն նրանում է կայանում, որ եռանդը բարձրանայ ստորին նպատակներից դէպի բարձր:

Գիտական բարոյագիտութիւնը չի կարող բռնել դրական բարոյականի տեղը, այլ նա միայն կարող է կանոնաւորել, զարգացնել և ընդարձակել այն: Գիտական բարոյագիտութեան ձգտելու ենք միայն այն պատճառով, որ կարողանանք մեղ հասկանալ և այդ ճանապարհով պարզենք թէ ինչ սկզբունքներով ենք անցկացնում մեր կեանքը և ապա այդ սկզբունքները յարմարեցնենք մեր ներքին ներդաշնակութեան:

Սորդու հոգեկան կեանքում գոյութիւն ունի անխառնափերի փոխադարձ ներգործութիւն գիտակցականի և անգիտակցականի մէջ, որովհետեւ իմացականութիւնը, զգացմունքը և կամքը փոխտրինում են մէկ մէկու: Այն, ինչ որ ձեռք է բերել դրանցից մինը, կարող է սեպհականութիւն դառնալ միւսների համար:

Գիտական բարոյագիտութիւնը երկու մասի է բաժանում. պատմական կամ համեմատական և փիլիսոփայական: Պատմական բարոյագիտութիւնը իցայ է հանում դրական բարոյագիտութիւնն այնպէս, ինչպէս որ յայտնի ժամանակաշրջանում որոշ ազգի մէջ երեւացել է. նա ձգտում է որոշել թէ ինչ փոփոխութիւն է առաջացել դրական բարոյագիտութեան մէջ զանազան պայմանների ընթացքում և համեմատել նրա տարբեր ձևերը, որ

նա ստացել է զանազան ժամանակներում՝ զանազան ազգերի մէջ: Նա աշխատում է այս տարբեր ձևերի պատճառները գտնել որոշ ֆիզիքական, հոգեբանական և պատմական յարաբերութեանց մէջ:

Իսկ փիլիսոփայական բարոյագիտութիւնը ոչ թէ նկարագրում կամ բացատրում է եղած բարոյական երեւոյթները, այլ գնահատում է նրանց:

Իւրաքանչիւր բարոյական դատողութիւն ենթադրում է այդպիսի նպատակ, որովհետև մի որ և է արարք տեսնելիս կամ նրա մասին մտածելիս զգացմունքն այն ժամանակ է միայն յուզում, երբ այս արարքը կամ ուժեղացնում կամ ճնշում է այն բանը, որի գոյութիւնը և յաջողութիւնը մեր սրտին մօտիկ է:

Ոչ այն բոլորը, ինչ որ զարգացել է պատկաժանօրէն, արգարանում է բարոյապէս: Մենք կարող ենք հասկանալ թէ դրական բարոյագիտութիւնը ինչպէս է ընդունել այն ձևը, որն ընդունուած է մեր ժամանակում և մեր երկրում, բայց և աւել կամ պակաս չափով մենք կարող ենք նրա մասին վիճել, նոյն իսկ արհամարհել: Պատմական բարոյագիտութիւնը հաշորդում է միայն այն, ինչ որ գոյութիւն ունի և թէ դա ինչպէս է կազմակերպուել, բայց եթէ մենք չենք ընդունում, որ բոլոր գոյութիւն ունեցած բարոյական արարքները անպատճառ խելացի են, ապա անհրաժեշտաբար մենք պէտք է նրանց նաև գնահատենք:

Ահա փիլիսոփայական բարոյագիտութիւնն է՝ յատկապէս սիստեմատիքական գնահատութիւնն, որ առաջ է գալիս որոշ հիմունքներից, որ կան մարդկային բնութեան մէջ և որ կատարւում է այդ հիմունքներին համապատասխան մասշտաբով:

Այդպիսի սիստեմատիքաբար կատարուած հետախուզութիւնը կարող է մեզ բերել բացասական հետեանքի յայտնի գործողութիւնների և կենսական ձևերի նկատմամբ, և ընդհակառակը ուրիշների նկատմամբ՝ դրական:

Կարող է պատահել, որ յայտնի գործողութեան կամ

Հաստատութեան նախնական պատճառը մենք չընդունենք, բայց դրանով գործողութիւններն ու հաստատութիւնները չեն կորցնում իրենց արժէքը և նշանակութիւնը: Փոխուած պայմաններում և միանգամայն այլ կողմից դիտելով նոքա կարող են առաջացնել գործողութիւններ, որոնք առաջ յայտնի չէին: Բնաւորութեան այդպիսի յատկութիւնը, ինչպէս ասպետական քաջութիւնը, պարկեշտութիւնը, ինքնազսպումն, որոնք զարգանում են կռախտ և բարբարոս շրջանում, այժմ կարող են առաջունից միանգամայն տարբեր մեկնութիւն ընդունել: Այստեղ էլ նոյնն է, ինչ որ դիցուք մի քաղաքում հնումն կանգնեցրած են լինում պարիսպներ պաշտպանութեան համար, որ յետոյ ծառայում է իբրև զբոսավայր կամ տօներ սարքելու տեղ: Այսպիսի դէպքերում բարոյագիտական աշխարհում տեղի է ունենում տեղափոխութիւն, որով նախկին պատճառները վերանում են, և առաջ են գալիս նորերը բայց և այնպէս արարքները, սովորութիւնները և հաստատութիւնները մնում են նոյնը, ինչ որ առաջ: Այստեղից պարզ է, որ որևէ բարոյական երևոյթի պատմական բացատրութիւնը ինքն ըստ ինքեան չի կարող ծառայել իբրև մասշտաբ գնահատութեան, որովհետև այդպիսի տեղափոխութիւնները միշտ էլ կարող են տեղի ունենալ: Օրինակ, հանդիպելիս գլուխը բանալ և խոնարհելը մի ժամանակ նշան էր երկչոտ պատրաստակամութեան գլխատման, իսկ այժմ դա մի հասարակ քաղաքավարութիւն է: Եթէ մէկը իմանալով այդ ձև բարեւելու պատմական ծագումը այդ վերջնի իբրև մասշտաբ արդի քաղաքավարական ձևը գնահատելու համար, ի հարկէ կսխալուի, աչքաթող անելով նոր պատճառը, որ հին ձևով է արտայայտում:

Միայն այն ժամանակ մենք կարող ենք կատարելապէս դատապարտել որևէ բարոյական երևոյթ, որը նոր հիմք ու գործադրութիւն գտնել չի կարող:

Եթէ մտառութեամբ կարդացիր իմ նամակը, ապա եկած կլինես այն եզրակացութեան, որ բարոյագիտու-

թիւնը լինում է բնագրական և իմացական: Իսկ իմացական կական բարոյագիտութիւնը՝ պատմական և փիլիսոփայական:

Սակայն կայ և մի երրորդ տեսակ բարոյագիտութիւն, որը մենք չպէտք է աչքաթող անենք, մանաւանդ, որ դա ահագին դեր է խաղացել մարդու կեանքի մէջ պատմական ժամանակներից մինչև մեր օրերը: Խօսքս աստուածաբանական բարոյագիտութեան մասին է, որի առթիւ պիտի մի քանի տող գրեմ այս տեսութիւնը մասամբ ամբողջացնելու համար:

Աստուածաբանական բարոյագիտութիւնը հակադրութիւն է թէ պատմական և թէ փիլիսոփայական բարոյագիտութեան, նրա հիմքը կազմում են անցեալ աւանդութիւնները, ճշմարտութիւնները, որոնք առաջուց հէնց տրուած են և իդէալը, իբրև պատմական յայտնութիւն: Նա չի ընդունում գիտական հետախուզութեան մեթոդ, որովհետև նրա հիմք կազմող յայտնութիւնը պահանջում է, որ իր կարծիքների վրա նայեն իբրև գերբնական ուժ վրա, որը անբացատրելի է ֆիզիքական, հոգեբանական կամ սոցիալական օրէնքների տեսակէտներով, որոնք պատմական գիտութեան յինտրաններն են: Նա իւր պատմական հիմունքների համար պահանջում է բացառիկ տեղ և պնդում, որ դէպի ինքը պէտք է վերաբերուել բոլորովին տարբեր ձևով, քան դէպի միւս համաշխարհային պատմութիւնները: Ըստ երևոյթին աստուածաբանական բարոյագիտութիւնը մօտենում է փիլիսոփայականին, երբ գնահատութիւն է սահմանում պատմական գործողութիւնների և կենսական ձեերի համար, բայց իրօք նա այդ գնահատութիւնը անում է ոչ թէ այն սկզբունքների հիման վրա, որոնց աղբիւրը մարդկային բնութեան մէջ է գտնուում, այլ իր ելակէտը նա համարում է դրանից վեր որ և է իդէալ, որ տրուած է գերզգայական յայտնութեամբ: Եւ հետևաբար նա դրա վրա կառուցանում է բացարձակ հեղինակութեան սկզբունքը: Բայց ինչ է նշանակում հեղինակութիւն, սա այն

բնազդն է, որ մէկը տաժում է դէպի միւսը իբրեւ յարգանք, իսկ յարգանքը կարող է առաջ գալ զանազան պատճառներից, օրինակ մէկը ֆիզիքապէս ուժեղ է և նա այդ ֆիզիքական գերազանցութեամբ երկիւղ է ներշնչում իր շրջապատողների վրա, մի ուրիշը շնորհք ունի հեռուն նախատեսներու և գործելու այնպիսի միջոցներով, որ ուրիշներին կարող է օրինակ ծառայել և նոքա հիացմունքով աշխատում են նրան նմանուել: Մի երրորդը հնարաւորութիւն ունի օգնութիւն անելու կամ պաշտպանելու ուրիշներին, և սոքա տաժում են դէպի իրանց պաշտպանը երախտիք, վստահութիւն և սէր:

Մարդկային կեանքը անկարող է առանց այդպիսի հեղինակութիւնների կառավարուել: Հին սերունդը նորի համար ներկայանում է իբրեւ կրթիչ և օրինակ: Մեծերը երեխաների համար, ուսուցիչը—աշակերտների համար ծառայում են իբրեւ հեղինակութիւններ, ամեն տեղ յաջողակները յետամնացների համար որոշ հեղինակութիւն են ներկայացնում և հեղինակութեամբ պայմանաւորուած յարաբերութիւնը դրական կամ բնազդական բարոյագիտութեան կարևոր տարրերից մինն է: Թէև դրական բարոյագիտութիւնը չի ընդունում հեղինակութեան սկզբունքի առաջ անպայման խոնարհուիլը:

Մարդիկ անդիտակցաբար, առանց որ և է հրամանի հետեւում են այն բաներին, որոնք նրանց թւում են մեծ և վեհ, նմանողութեան և սովորոյթների բնազդով նոքա հետեւում են նոյն իսկ աննշան և անօգուտ բաների, եթէ սրանք կրկնողութեան զօրութեամբ են ներգործում կամ օրինակներ ունեն: Միայն այն ժամանակ, երբ առաջ է գալիս քննադատութիւն, երբ կասկածը խախտում է կիսանգիտակցական արարածների մէջ նախկին հանգստութիւնը, գիտակցութեան հետ միասին առաջ է գալիս հեղինակութեան սկզբունքը իր բացարձակ ձևով, իբրեւ ամենատեսակ բարոյագիտութեան կատարելագոյն հիմք: Ամուր յենակէտի անհրաժեշտութիւնը միայն այն ժամանակ է հարկաւորուում, երբ մի հարց կամ կասկած առաջ

է բերում մի ուրիշ հարց կամ կասկած և սկսում է թուալ, թէ ոչինչ հաստատուն բան չկայ և առանց անպայման ամուր յենակէտի հեշտութեամբ կարելի է մուրթուել: Այն ժամանակ մարդկային մտածողութիւնն ու զգացմունքները թւում են երերուն յենակէտ բարոյական աշխարհում: Մարդկային կեանքի մեծագոյն հարցերից մինը թէ՛ «ինչ բան է բարին և չարը», պահանջում է ամենազօրեղ հիմնակէտ, իսկ ինչը կարող է աւելի ամուր լինել, քան ամենակարող էակի կամքը: Եթէ կարելի է այդպիսի կամքն ընդունել, ապա պիտի բոլոր հակաճառութիւնները դադարեն և անպայման հեղինակութեան առջ լռեն բոլոր կասկածները:

Այս դէպքում բարին այն է, ինչ որ համապատասխանում է աստուածային կամքին և այն բարի է միայն նրա համար, որ համապատասխանում է աստուածային կամքին (*bonum est, quia deus vult*). Դուռն Սկոտը միջին դարի վերջում (1265—1308) բացարձակ կերպով ասել է, որ եթէ սպանութիւնը հրամայուած լինէր Աստծուց, յանցանք չէր լինել: Եթէ աստուածաբաններն, ի հարկէ, այսքան կտրուկ չեն դնում հարցը, բայց անուրանալի է, որ աստուածաբանութեան ամեն մի հիմնակէտը ունի նման դարձուած, պարունակում է իւր մէջ անպայման հեղինակութեան սկզբունքը: Եկեղեցու գլխաւորների բանաւոր և գրաւոր յայտարարութեամբ թելադրում են ժողովրդին թէ Աստուածութեան կամքի համեմատ ինչը պէտքէ համարել բարի և ինչը չար, իսկ ունկնդիրներն ու ընթերցողները պարտաւոր են հետեւել լուռ հնազանդութեամբ:

Մարդկութեան մի որոշ մասը դարերի ընթացքում անխօս հնազանդուել է այդ սկզբունքին և աստուածային հեղինակութիւնն ընդունելով աշխատել է իր կեանքի բոլոր պայմաններն յարմարեցնել նրա պահանջներին, որը գրուած ու թելադրուած է եղել ս. Գրքի միջոցով:

Այս պատուիրանը թէ՛ պիտի չերդուես, մարդկանց բերել է այն համոզման թէ լաւ է մեռնել քան երգուել,

որովհետեւ եթէ Աստուածային կամքն այն է, որ վատ է
երգութիւնը, ապա պէտքէ գերադասել մահը երգումից։

Հետեւեալ աստուածաբանական բարոյագիտութիւնը
ընդունում է մի անգամ ընդ միշտ Նախախնամութիւնից
սահմանուած բարւոյ և չարի գնահատութիւնը և մարդիկ
այդ ընդունել են այն ժամանակից, երբ անկարող են ե-
ղել իրանց իմացականութեամբ գնահատութեան ենթար-
կել կատարուած գէպքը։

Աստուածաբանական բարոյագիտութիւնը սերտ կապ-
ուած է եկեղեցու հետ, ուստի ես կկամենայի մի քանի
խօսք տասել քրիստոնէութեան և աստուածաբանական բա-
րոյագիտութեան առնչութեան մասին։

Քրիստոնէական բարոյագիտութիւնը, որ մենք կար-
գում ենք աւետարանիչների գրուածներում և առաքելոց
թղթերում իւր զարգացման ընթացքում մասամբ միայն
յենուել է ընդհանուր աստուածաբանական բարոյագի-
տութեան վրա, մասամբ միայն ընդունում է հեղինակու-
թեան սկզբունքը. ինչպէս օրինակ վարձքի այն հատու-
ցումն, որ մարդիկ պիտի ստանան անդրգերեզմանեան
կեանքում, բայց քրիստոնէական հասկացողութեամբ
Աստուած, որի ամենակարող ողորմութեան ակնկալում
են մարդիկ, գլխաւորապէս ներկայանում է իբրեւ գթա-
սրտութեան իդեալ, որը իրապէս նշանակում է սէր առ
մարդիկ։

Քրիստոնէութիւնը հիմնել է փրկութեան թագաւո-
րութիւնը այն մարդկանց համար, որոնք մաքուր են
սրտով, որոնք ծարաւի են ճշմարտութեան, խաղաղասէր
են, սիրում են միմեանց։

Այս նոր թագաւորութեան մէջ այլ ոգի, այլ յարա-
բերութիւն էր տիրում քան մինչ այդ յայտնի համաշ-
խարհային պատմութեան յայտնի գոռող աշխարհիկ թա-
գաւորութիւնների մէջ։

Նախնական քրիստոնէական բարոյականի նշանակու-
թիւնը հէնց նրանումն է, որ թափանցելու էր մարդկանց
սրտի խորքերը մարդկային սէրը և եթէ կուզես իմանալ,

քրիստոնէական բարոյագիտութեան մէջ աստուածաբանական տեսութիւնները յճուական նշանակութիւն ունեցան միայն սրա դաւանաբանական զարգացման շնորհիւ, երբ սկսուեց մաքառումն զանազան դաւանութիւնների ու ազանդների ներկայացուցիչների մէջ: Հաւատքի տարրերութիւնը սահմանափակեց գէպի մարդն ունենալիք սիրոյ չափը, մարդու գնահատութեան դրական մասշտաբը ոչ թէ այն էր թէ նա որչափով սէր և սրտակցութիւն ունի, ոչ թէ այն թէ նա մաքուր է սրտով և ճշմարտութիւն փնտրող, այլ այն թէ նա ունի այն հաւատը, որ այս կամ այն դաւանութեան ներկայացուցիչը ճշմարիտ է համարում:

Դու տեսնում ես, որ քրիստոնէական բարոյագիտութիւնը իր գնահատութիւնը անում է ոչ այնքան նախախնամական յայտնութիւններով, որքան մարդկային սրտի արտայայտութեամբ, որով մի կողմից մօտենում է դրական կամ բնագդական բարոյագիտութեանը, միւս կողմից՝ իմացական կամ գիտական բարոյագիտութեանը:

Տգրութիւն:

20 Մարտի

Քո Գալսկին Աւսուցիչ:

